քան զօր ծաւալին ի վերայ ձեր հայրապետութիւն խնամք Վեհափառ Պարերարին ձերոյ, որ աւասիկ զումարեաց առտ վասն ձեր զրանիրուն ուսուցիչս եկեղեցականս և աշխարհականս համալսարանական զիտութեամբ ճոխացեալս և հռչակեալս զիտնական զրուածովք։ Ուստի հարկ և պարտաւորութիւն կայ ի վերայ ձեր փութալ քաղել զամենայն օգուտ ի սոյնպիսի բարեյաջող հանդամանաց և անխոնջ ջանասիրութեամբ ամբարել ի միտս ձեր զուսմունս պէս պէս զիտութեանց, որով միայն կարէք հանդերձ հեզ և պարկեշտ վարուք երախտագէտ լինել առ Տէր Պարերարն ձեր և առիթ Նորին մխիթարութեան, որ յանչափ ճգունս երկանց ծնաւ զայս տուն փրկութեան և դիւցուցանէ զայս հայրապետութիւն խնամովք և դիւցուսցէ առ յապայն։

Յաւարտ բանիս՝ թողլով Արժանապատիւ Վահան Վարդապետի հաղորդել ձեզ կարևոր տեղեկութիւնս ըստ ուսումնական կառավարութեան Ն՝եմարանիս՝ ադաչեմ զԳերապատիւ Հարսդ՝ զեղբարս և ըզհանդիսականս համօրէն՝ վերառաքել ըզլիաշուրթն բարեմաղթութիւնս մեր առ բարձրեալն Աստուած, զի անսահման բարերարութեամբ իւրով շնորհեսցէ Վեհափառ Հայրապետիս մերում զանվտանգ և զանիսոով կեանս ընդ ամն ձիգս, տացէ նմա կարողութիւն առ ի շարունակել և կատարել զմեծազործութիւնս իւր ի պայծառութիւն Մայր Աթոռոյս և Հայաստանեայց Եկեղեցւոյ և ի յառաջադիմութիւն Ազգիս. պահպանեսցէ ընդ հովանեաւ սրբոյ Խաչի Միածնի Որդւոյ իւրոյ զՍ. Գէորգեան Ն՝եմարանս մեր. ծաւալեսցէ զշնորհս Հոգւոյն Սրբոյ ի միտս ուսումնասէր աշակերտաց սորին և պարգևեսցէ մեզ ամենեցուն զհոգեկան մխիթարութիւնս ի փառս սրբոյ Երրորդութեան. եղիցի և եղիցի։

ՑԵՒՈՒՐ ՏՕՆԻ ՍՐԲՈՅՆ ԳԷՈՐԳԻՍ ՋՕՐԱՎԱՐԻ

ԵՒ Ի ՀՈՐՈՐԴԻ ՏԱՐԵԴԱՐՁԻ Դ. ՃԵՄԱՐԱՆԻՍ

Ո Դ Ղ Ե Ր Ք.

Որ իմբիթան կանգնիս տաճարդ Հայաստանեայցս ի պարգեւ,
Եւ զանազօտ սրփռես ըզլոյս իբրեւ զարփի շուրջ ըզքեւ,
Եւ Մովսիսեան զերթ ամպն լուսոյ յառաջընթաց հորդես մեզ
Զուղի՝ իլոյս ճշմարտութեան, զուղի՝ յուսման առպարէզ։
Քեւ նորոգեալ արդ միւսանգամ կենցաղի դար Մեսրոբայ
Ի քէն ելցեն մեն մի Եղնիկք, Մովսէս, Դաւիթ, Եղիշայ։
Քեւ սրբեսցին դառն արտասուք Ոգւոյն մերոյ Հայրենեաց,
Եւ պարգեսցի աղեղն յերկինս ի հաշտութիւն Հայկազանց։
Մի եւս ամպրոպք մրրրրկայոյզք փոթորկեսցին զքոյդ գրլխով,
Եւ մի արկածք դրժոխքմբերք վրդովեսցեն զկեանսդ անխրոով։

Այլ կացցես միշտ ի յանդորրու, գրբուատեսցիս գոգոր իլար,
Եւ սիրտք Հայոց մաղթեսցեն Քեզ եւ Հիմնադրիդ կեանս յամայր։

Ի ԳԷՆՈՅ ԱՂԱՂԷՔՊՈՅ Ն. Ղ. ԱՌՈՍԲԱՆԷ

ԹԱԴԷՈՍ ՁԱՔԱՐԵԱՆՑ.

Ի ՄԵԾԱՇՈՒՔ ՀԱՆԴԻՍԻ ԱՒՈՒՐ՝ ԲԱՑՄԱՆ

ՁՈՒՐՈՒԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՃԵՄԱՐԱՆԻՍ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

ՈՒՂՂԵՔՁ.

Զայն աւետեաց հընչեաց այսօր յԱյրարատեան գագաթանց
Զայնել զհիւսիս եւ զհարաւ ի յայս յակումբ բերկրանաց.
Զարթիր զարթիր եւ ուրկ զանձամբ ըզծիրանիս Հայաստան,
Զի նոր Արփի յաղջամըղջէ ել ծագեցաւ ի քում տան։
Որ ի մթան յերեր վայրի յաւերակաց հիմն եդաւ,
Զերթ անջրդիս յանապատի այս դարառոտան ծաղկեցաւ.
Անդ ուր անդուլ բոմբիւնք զինուց տան ճեպ ընդ ճեպ արձագանգ
Եւ ճապաղիք բոսոր արեանց ծաւալ ծաւալ գրնան ցանգ,
Սոյն այս Տաճար աստ կառուցաւ մեր Հայրենեաց ի ճակատ,
Զլոյս գիտութեան եւ իմաստից Հայոց շողել անընդհատ։
— Վիպեա մուսայդ Ասքանազեան, հիմ կաս լռիկ եւ անհունջ
Հար ըզգաւինդ եւ Թորգոմեանք լըսիցեն քոյդ ըզմբրմունջ.
Քանի՞ աղէտք, հրդեհ տագնապք շուրջ ըզմեօք պատեցան,
Մինչեւ ծագեալ լոյս գերարփին եբարձ ցբրուեաց զամենայն.
Ցարկածս յոլովս ձախողակիս տարուբերէր բախտ մեր հեգ,
Մինչ ի հանգիստ անփոյթ կենաց ցամաքաթեւս անցաք մեք։
Զայն ուր Ոգիդ յանմահ դասուց, երթ եւ նօթեա՛ խընդագին,
Եթէ ճրգունք սուրբ Մեսրովբայ եւ Սահակայ Պարթեւին
Բարգաւաճեալ դարուց ի դարս բարձր ի գագաթըն պանծայ,
Եւ ի հաւատս աստուածային Հայ մանկըտին զօրանայ։
Երկարեցէ՛ք երկինք զաւուրս Հիմնադրիս Վեհափառ
Ի սէր Հօտին սիրեցելոյ ե՛ եկեղեցւոյ ուղղափառ։

Ի ԳԷՆՈՅ ԱՂԱՂԷՔՊՈՅ ՀՈՒՐՈՒԴԻ Ղ. ԱՌՈՍԲԱՆԷ

Աշակերտ Նորին դասատան

ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՆԵԱՆ ԲՈՒՆԻԱԹԵԱՆՑ.

ՅՕԳ ՍԷՊՈՒՔԷՐԻ 1878 ԹՎ.